Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2201

ԴՐ. ԳԱՀ. ՊԵՏՐՈՎ

ԲԱՐԻ ՍԵՐՄԵՐ

Թարգմ.

ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԱԳԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1904

201
Դ-50

20,8
9-50
03 AUG 2009
PA
2316

ԴՐ. ՔԱՀ. ՊԵՏՐՈՎ

ԲԱՐԻ ՍԵՐՄԵՐ

Թարգմ.

ՄԱՄԲՐԷ ՎԱՐԴԱՊԵՏ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1904

ՀԱՅ. ՊԵՏ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՆՎԵՐ
№

22.07.2013

1155-98

ՔՐԻՍՏՈՍ ԵՒ ՄԵՂԱՒՈՐՆԵՐԸ

Յովհաննէս Մկրտիչը մարդկանց հրաւիրում էր ապաշխարելու։ Նոյն հրաւէրով է սկսում և Յիսուս Քրիստոս իւր քարոզութիւնը։ Մատթէոս աւետարանիչը այսպէս է նկարագրում Յիսուսի քարոզութեան սկիզբը. «Ապա սկսաւ քարոզել և ասել. Ապաշխարեցէք, որովհետև մօտեցել է երկնքի արքայութիւնը» (Մատթ. Դ, 17)։ «Եթէ չապաշխարէք, ասուած է Յովհաննու աւետարանի մէջ, չէք կարող մտնել Աստուծոյ արքայութիւնը»։ Ապաշխարութիւնը առաջին պայմանն է, որով պէտք է սկսուի մարդու բարեփոխութիւնը. առանց ապաշխարութեան հնարաւոր չէ մեր կեանքի մէջ որևէ հոգևոր բարեշրջումն։

«Ո՞վ անարդարութեան և անիրաւութեան լծի տակ հեծող մարդիկ, դիմում է Քրիստոս աշխարհին, այն կեանքը, որ ստեղ-

ծել էք ձեզ համար, չի կարող տալ ձեր ո-
րոնած հոգեկան խաղաղութիւնը։ Ձեր մար-
գարէներն են. խորամանկութիւն, բռնու-
թիւն, անառակութիւն, նախանձ և այլ
այդպիսիները, այդ բոլորը չարիք են, իսկ
չարիքը միմիայն չարիք կարող է բերել
ձեզ. ճշմարիտ երջանկութիւնը բարձրա-
գոյն բարիքն է, որ միմիայն բարուց, մաքուր
կեանքից կարող է առաջանալ։ Դուք յոգնել
էք մեղքի լծի տակ, ձեզ ճնշում է մարդ-
կային անարդարութիւնը, եկէք Ինձ մօտ և
սովորեցէք Ինձնից։ Իմ խօսքերը ձեր տան-
ջուած սրտերում բուժիչ բալասան կը ցօղեն։
Ես ձեզ այնպիսի ճանապարհ ցոյց կը տամ,
որը ձեր հոգուն խաղաղութիւն կը բերէ։
Հնազանդուեցէք Իմ վարդապետութեանը,
գնացէք այն շաւղով, որ ձեզ ցոյց եմ տուել
և դուք կը տեսնէք, որ Իմ լուծը քաղցր է
և Իմ բեռը թեթև։ Երկար, մութ և խեղ-
ճող գիշերուան, Իմ աշխարհ գալով, փո-
խարինում է պայծառ, խաղաղ օրուայ ար-
շալոյսը։ Մարդիկ վաղուց սպասում էին
փրկութեան օրուան։ Այժմ ժամանակը հա-

սել է. մօտեցել է Աստուծոյ արքայութիւնը.
նա մօտ է, ահա այստեղ է, ձեզ մօտ է,
բայց հարկաւոր է, որ նա ձեր մէջ լինի, որ
նա ներս մտնի ձեր սրտի մէջ և ամբողջովին
համակէ նրան։ Մաքրեցէք ձեր սրտերը և
Աստուծոյ արքայութեան համար տեղ պատ-
րաստեցէք, ձեր կեանքի մէջ ընդարձակ տեղ
տուէք արդարութեան ու բարուն, ազատե-
ցէք ձեր հոգին ապականող մեղքերից, ա-
պաշխարեցէք»։

Առանց ապաշխարութեան չի կարելի
Աստուծոյ որդի դառնալ, չի կարելի Քրիս-
տոսի աշակերտ լինել։ Յիսուսի ունեցած
խօսակցութիւնը Նիկոդիմոսի հետ պարզ
ցոյց է տալիս այդ։ Հրէից իշխաններից մէկը,
Նիկոդիմոս անունով, գիշերով գալիս է Յի-
սուսի մօտ և ասում նորան. «Ռաբբի՝ գի-
տենք, որ Աստուծուց ուղարկուած վարդա-
պետ ես, որովհետև ոչ ոք չէ կարող այն
հրաշքները կատարել, որ Դու ես անում,
եթէ որ Աստուած նորա հետ չլինի»։ Յիսուս
պատասխանում է նորան. «Ճշմարիտն եմ
ասում քեզ, եթէ որ մարդ չծնուի վերստին՝

չի կարող տեսնել Աստուծոյ արքայութիւնը» (Յով. Գ, 1—3)։ Այս պատասխանով կարծես Յիսուս ուզում էր ասել. «Սպասիր, Նիկոդիմոս, դու քեզ Իմ աշակերտն ես համարում, որովհետև տեսար Իմ հրաշքները. բայց հասկացիր ես արդեօք Իմ խօսքերի խոր իմաստը, Իմ խօսքը արձագանք է տալիս քո հոգու մէջ, քո առաջուայ յանցաւոր վիճակը զղջալի է դարձել քեզ համար, վճռել ես արդեօք դէն ձգելու քեզնից, որպէս մի ծանր բեռ, քո թուլութիւնները, պակասութիւնները, արատները. արտասուք թափել ես արդեօք քո արած անիրաւութիւնների համար, լուացել ես արդեօք արցունքով քո մեղքերի տիղմը։ Ո՛չ թէ Ինձ Տէր, Տէր, ասողը կը մտնի Աստուծոյ արքայութիւնը, այլ նա, ով կը կատարի Իմ երկնաւոր Հօր կամքը։ Հասկացիր ես արդեօք այս բոլորը։ Ով որ ուզում է գալ Իմ յետևից, նա պէտք է աղատուի իւր նախկին արատներից, դէն ձգէ իրենից մեղքը, որպէս կեղտոտ հանդերձ, հրաժարուի իւր առաջուայ ցոփ կեանքից և սկսի ապրել բոլորովին նոր եղանակով, որպէս թէ նոր ծնուած լինի։ Ճշմարիտն եմ ասում քեզ, այսպէս վերջացրեց Յիսուս իւր խօսակցութիւնը Նիկոդիմոսի հետ, եթէ մարդ չապաշխարի ի սրտէ, չնորոգուի և չվերածնուի հոգով, չի կարող տեսնել Աստուծոյ արքայութիւնը»։

Յիսուս այսպէս էր կոչում մարդկանց դէպի նոր, մաքուր կեանք, և եթէ Նորա խօսքը ընկնելով որ և է մէկի սիրտը՝ խլում էր նրա հոգու խորքից զղջման հառաչանք և աչքերում վշտի արցունք երևցնում, ինչպիսի յուզիչ խնամքով և քնքոյշ սիրով էր փարում Նա այն ժամանակ զղջացող մեղաւորին։ Ինչպէս որ հովիւը իւր ուսին դրած խնամքով տանում է կորած ոչխարը, ինչպէս որ հայրը ուրախութեամբ դուրս է գալիս իւր կորած որդու առաջ, այնպէս էլ Յիսուս հայրաբար դէպի Ինքն էր դրաւում իրենց անիրաւութիւնները լացող, ի սրտէ զղջացող բոլոր մեղաւորներին։

Նորա սիրոյ և արդարութեան դատաստանի առաջ չկար յանցանք, որ կարելի չլինէր լուանալ զղջման արտասուքով և Նա՝

զղջացող պոռնիկների առաջ լայն կերպով բաց էր անում Իւր սրտի դռները, առատութեամբ առաջարկում էր նրանց Իւր անսահման սիրոյ անապառ դանձը։ Մաքսաւոր Մատթէոսին Իւր աշակերտն է դարձնում. մաքսապետ Զաքէոսի մօտ իջևանելու է գնում. ժամերով խօսում է Սամարացի կնոջ հետ, որը իրաւունք չունէր մարդկանց երես դուրս գալու. բոլորից առաջ խաչուած աւազակին է Իւր հետ երկնաւոր Հօր օթևանը առնում։ Աւետարանը այնքան սրտաշարժ է նկարագրում այս բոլոր դէպքերը, որ դրանց մասին արժան է աւելի մանրամասն խօսել։

ա. Երիքովում մեծ շարժում կար։ Յիսուս շրջապատուած խիտ ամբոխով անցնում էր քաղաքի միջից։ Զաքէոս անունով մի հարուստ մաքսապետ, օգտուելով հանգամանքից, ուզում էր տեսնել Յիսուսին, բայց չգիտէր ինչպէս անէր։ Մօտենալ չէր համարձակւում, իրեն անարժան էր համարում։ Իւր անցեալը յիշելուց՝ երեսը ամօթից կարմրում էր և սիրտը չարաչար ճմլւում։ Մի թէ ինքը, ժողովրդին կողոպտողը, թոյլերին և անպաշտպաններին զրկողը, կարող է տեղ ունենալ սիրոյ և արդարութեան Մեծ Վարդապետի մօտ։ Ոչ, Զաքէոսը աւելի շուտ կը համաձայնի գետնի տակ ծածկուել, քան կանգնել ճշմարտութեան Վարդապետի մօտ և տեսնել իւր վրայ դարձրած նորա պայծառ աչքերի հայեացքը, որ մինչև հոգու խորքն է թափանցում և սրտի դաղտնիքները կարդում։ Բայց Յիսուսին տեսնելու ցանկութիւնը անդիմադրելի էր նրա մէջ։ Զաքէոսը այնքան էր լսել Յիսուսի բարութեան և սրբութեան մասին, որ իւր հոգին ամբողջապէս ձգտում էր դէպի Նա։ Թէ իւր և թէ ուրիշների կեանքում Զաքէոսը այնքան քիչ էր տեսել արդարութիւն, որ ամեն ինչ կըտար, միայն թէ կարողանար տեսնել Նրան, որ ճշմարտութիւն էր և ուրիշներին ճշմարտութիւն էր ուսուցանում։ Հակառակի պէս Զաքէոսը կարճ էր հասակով և հեռուից չէր կարող տեսնել Յիսուսին ժողովրդի միջից։ Այն ժամանակ նա վազեց առաջ, բարձրացաւ ճանապարհի վերայ գտնուած ժանտաթզենին և սպասում էր Յիսուսի անցնելու

լուն։ Զաքէոսը մի բան էր ուզում միմիայն, տեսնել Յիսուսին, և յանկարծ Յիսուս, երբ անցնում էր այդտեղից տեսաւ Զաքէոսին և ասաց նրան. «Զաքէ, շուտով ցած իջիր, որովհետև այսօր ես պէտք է քո տանը իջևանեմ»։ Զաքէոսը շտապով ցած իջաւ և ուրախութեամբ ընդունեց Յիսուսին իւր մօտ։ Փրկչի մի քանի խօսքը բաւական եղաւ վայրկենապէս վերածնելու Զաքէոսի սիրտը։ Այն միտքը, որ Յիսուս, ամենամեծ Արդարը, չի խորշում իւր նման մի նախատուած կեղեքողից, փայլակի պէս լուսաւորեց նորա խաւար հոգին. Զաքէոսը հոգով վերակենդանացաւ։ Թող ուրիշները շարունակեն արհամարհել Նրան որպէս կեղեքողի, կողոպտողի, զրկողի. Զաքէոսի համար այժմ պարզ էր, թէ ինքը Աստուծոյ առաջ դեռ բոլորովին կորած չէ, թէ իւր ներսում կայ դեռ մի աստուածային կայծ, որ թանդ է իւր Մեծ Հիւրի համար և որը այժմ իւր յետագայ կեանքի համար ամենամեծ արժէք ունեցող դանձը պիտի լինի։ Այն ամենը, ինչի համար որ Զաքէոսը առաջ այնպէս ան-

պատկառութեամբ ոտի տակ էր տալիս բարին ու արդարը, այժմ նրա աչքում կորցնում է իւր արժէքը։ Նա այժմ մի բան է միայն ցանկանում. պահել իւր նկատմամբ Յիսուսի այն բարեհաճութիւնը, որին անապատելի կերպով արժանացել էր։ Եւ Զաքէոսը, ինչպէս պատմուած է Աւետարանում, վերկենալով՝ ասում է Յիսուսին. «Տէր, իմ կարողութեան կէսը աղքատներին կըտամ և եթէ մէկին զրկել եմ, քառապատիկ կը հատուցանեմ»։ Յիսուս ասաց նրան. «Այսօր այս տան համար փրկութիւն եղաւ» (Ղուկ. ԺԹ. 8—9)։ Զաքէոսը փոքր ինչ առաջ, Յիսուսին, դէթ հեռուից տեսնելու համար, ժանտաթզենին բարձրանալով, կարող էր արդեօք մտածել, որ իւր մէջ այդպիսի փոփոխութիւն պիտի տեսնար։ Ահա այսքան զօրեղ է Աստուծոյ խօսքը նոյն իսկ ամենամեծ մեղաւորին փրկելու համար, միմիայն թէ նա երես չդարձնէր Աստուծոյ արդարութիւնից, միմիայն թէ, Զաքէոսի նման, ցանկանար դէթ հեռուից տեսնելու Յիսուսին։

Բ. Յիսուս ընթրիքի էր հրաւիրուած փարիսեցի Սիմոնի մօտ։ Տանտէրը ըստ արժանւոյն չէր ընդունել մեծ Հիւրին. նորա ոտները չէր լուացել, նրա գլուխը չէր օծել իւղով։ Երբ ամենքը նստան ընթրիքի, մօտեցաւ Յիսուսին մի կին ձեռքին բռնած նարդոսի ազնիւ իւղով լի շիշը. վախենալով էր մտել տուն և անվստահութեամբ մօտեցել Յիսուսի ոտներին. մինչև այժմ նա անառակ կեանք էր վարել. ինքն իսկ առանց ամաչելու չէր կարողանում իւր մտին խօսել կամ մտածել։ Նորա կեանքը անցնում էր ագմկալից խնջոյքներով և անմիտ զուարճութիւններով, իսկ սրտի մէջ միշտ մի թախիծ էր մնում։ Իւր թեթևամիտ երիտասարդութեան օրերում ոչ ոք նրան բարի խորհուրդ չէր տուել, չէր զգուշացրել նրան գայթակղութեան ճանապարհներից. իսկ այժմ ամենքը երես են դարձնում նրանից, արհամարհանքով են յիշում նրա անունը։ Ոչ մի կարեկցական խօսք, ոչ մի բարի, սիրալիր հայեացք։ Նա լսել էր, որ Յիսուս ոչ ոքին չի մերժում իրանից, որ շատերը

տանջուած սրտով նրան են դիմում և նա սիրով մխիթարում է ամենքին։ Նունչը բռնած, առանց մի խօսք արտասանելու, երկիւղածութեամբ ընկաւ Յիսուսի ոտները և նա չարդելեց։ Այն ժամանակ նրա բոլոր վիշտն ու կեանքի դառնութիւնները վերացան սրտից, հեկեկալով բռնեց Յիսուսի ոտները և երախտագիտութեամբ լցուած համբուրում էր ու իւր մազերով սրբում արտասուքի հետքերը. ապա նա կոտրեց իւղի շիշը և սկսեց օծել Յիսուսի ոտները։ Փարիսեցին ասում էր ինքն իրան. «եթէ նա մարգարէ լինէր, կիմանար թէ ով է իրան մօտեցողը, քանի որ նա մեղաւոր կին էր», Սիմոնը այդպէս էր դատում, ծանօթ լինելով հեկեկող կնոջ անցեալ կեանքին. բայց Յիսուս ուրիշ կերպ էր դատում։ Նա կարդում էր մարդկանց սրտերը և գիտէր, որ իւր մօտ նստողը այլևս նախկին մեղաւոր կինը չէր. նրա հոգու ամբողջ տիզմը լուացուած էր արդէն զղջման ջերմ արտասուքներով և իւր ոտների մօտ նստած էր այժմ մի կին, որի վերածնուած հոգու գեղեցկութիւնը միան-

գամայն նսեմացրել էր արդէն մարմնականը։ Սրտագէտ Փրկիչը գիտէր, որ այժմ աւելի շուտ գեղը հակառակ իւր հոսանքի կընթանայ, քան թէ այդ կինը կրկին դէպի իւր նախկին կեանքը կը դառնայ, ուստի և նրան դառնալով ասաց «Քո մեղքերը թողնուած են, հաւատքդ քեզ փրկեց, գնա խաղաղութեամբ»։

Գ. Երուսաղէմում տօն էր կատարւում։ Յիսուս նստած տաճարի դաւթում ուսուցանում էր ժողովրդին։ Ունկնդիրները հոգ բազմութեամբ շրջապատել էին Նորան և լռութեան մէջ ագահաբար խլում էին Նորա բերնից ելած ամեն մի խօսքը։ Յանկարծ կատաղի աղաղակների մի ձայն խանգարեց տիրապետող հոգեզմայլ խաղաղութիւնը. բոլորը յետ նայեցին։ Փարիսեցիների մի խումբ զայրոյթով ձեռքերնին շարժելով Յիսուսի մօտ էին բերում կիսամերկ, գղգղուած մազերով, ամօթահար և սարսափահար եղած մի կին։

Վարդապետ, աղաղակում էին նրանք. այս կինը բռնուած է շնութեան մէջ. Մով-

սէսը պատուիրել է մեզ այսպիսիներին քարկոծ անել։ Դու ինչ կասես այդ մասին։

Սրանով նոքա Յիսուսին կամենում էին դժուար կացութեան մէջ դնել, իմանալով Նորա անսահման բարեսրտութիւնը. Յիսուս կամ պէտք է ներէր մեղաւոր կնոջը և դրանով խանգարէր Մովսէսի օրէնքը կամ պիտի դատապարտէր նրան և դրանով իրենից հեռացնէր ամբոխին, որ այնքան գնահատում էր Նրա ողորմածութիւնը դէպի բոլոր թշուառները։ Բայց Յիսուս նրանց սպասածի պէս չվարուեց. սրտի խոր վշտով լսեց նրանց նենգամիտ հարցը, գլուխը խոնարհեցրեց և սկսեց մատով գրել գետնի վերայ։ Ապա նայեց նրանց և ասաց, «Ով որ ձեզնից անմեղ է, առաջինը թող նա քար ձգէ». ոչ ոք նրանցից ձեռք չբարձրացրեց և ամօթահար եղած սկսեցին ցրուել։ Մնաց Յիսուսի մօտ միայն մեղաւոր կինը, որը այլևս նախկին շնացողը չէր, այլ հոգով վերածնուած, մաքուր, հոգևոր սիրով լցուած մի նոր արարած, որի համար այժմ զզուելի էր նոյն իսկ իւր անցեալ կեանքի յիշողութիւնը։

2 ՀԱՄԱՐ

Նայեց Նրան սրտագէտ Տէրը և ասաց. «Ո՛վ կին, ո՞ւր են քեզ մեղադրողները. ոչ ոք քեզ չդատապարտեց». «Ոչ, Տէր». պատասխանեց կինը. «Ե՛ս ևս չեմ դատապարտում. գնա՛ և այլևս մի՛ մեղանչի՛ր», ասաց Նրան Յիսուս։

Ջ

ԱՆՊՏՈՒՂ ԹՁԵՆԻՆ

Երուսաղէմում գտնուած ժամանակ Յիսուս սովորաբար գնում էր Բեթանիա՝ Ղազարոսի մօտ գիշերելու։ Այդտեղ՝ անձնուէր բարեկամների շրջանում Յիսուս հանգիստ էր առնում օրուայ աշխատանքից։ Այդպէս արաւ նաև հանդիսաւոր կերպով Երուսաղէմ մտնելուց յետոյ։ Ամբողջ օրը Յիսուս մնաց տաճարում, ուսուցանում էր ժողովրդին և բժշկում հիւանդներին. ապա թողնելով տաճարը՝ ճանապարհ ընկաւ քաղաքից դէպի Բեթանիա և գիշերը այնտեղ անցկացրեց։ Առաւօտեան Երուսաղէմ վերադառնալիս Յիսուս քաղցեց և տեսնելով ճանապարհի վերայ մի թզենի, մօտեցաւ նրան, բայց տերևներից զա՞ ոչինչ չգտնելով նրա վերայ, ասաց. «Թող այսուհետև

պտուղ չքաղուի քեզնից յաւիտեան» և իսկոյն չորացաւ թզենին։ (Մատթ. ԻԱ. 19.)

Թզենին տարբերւում է միւս ծառերից նրանով, որ նախ պտուղն է երևում նրա վրայ և ապա բացւում են տերևները և ծածկում ծառը։ Հետևապէս երբ թզենին արդէն տերևներով ծածկուած է, նրա վրայ պտուղներ ևս պիտի լինին։ Այդ հաշուով էր, որ Յիսուս մօտեցաւ ճանապարհի վերայ գտնուած թզենուն. Նա կամենում էր մի քանի թուզ կտրել, բայց ոչ մէկը չգտաւ։ Հապա ինչի համար էր այդ թզենին. ինչի համար էր նիւթ ստանում երկրից, անձրևի ջուրը ծծում, արևի ջերմութիւնը կլանում։ Ինչու՞ նա այդ բոլորը խլում էր ուրիշ թզենիներից և յանիրաւի զրկում նրանց։ Միւսները օգուտ են բերում, պտուղ են տալիս, իսկ այդ անպտուղ թզենին իզուր տեղը փչացնում է Աստուծոյ տուրքերը։ Աւելի լաւ է, որ նա չորանայ և գէթ վառելիքի, շինութեան կամ գործիքների համար պիտանի լինի։ Ուստի և Յիսուս ասաց նրան. «Թող այսուհետև պտուղ չքաղուի քեզնից

յաւիտեան», և թզենին իսկոյն չորացաւ։

Անպտուղ թզենու նման հրէաները իրենք իրենց գլխին դատապարտութիւն էին պատրաստում, ուզում էին սպանել Նրան, Որը եկել էր արթնացնելու նրանց խիղճը, նրանց մարմնի և հոգու այժերը դէպի Աստուծոյ գործը ուղղելու։ Յիսուս իւր խօսքով, որպէս կենդանի ջրով, ուզում էր կենդանացնել նրանց մեռած հոգիները, նոր կեանքի էր հրաւիրում, պատուիրաններով ու առակներով Աստուծոյ արքայութեան օրէնքներն էր բացատրում, ինքը որպէս կենդանի օրինակ ներկայանում նրանց։ Բայց հրէաները Նորա խօսքերը չէին լսում, նախատում էին Նորան, Աստուծոյ գործին չէին ուզում ծառայել։ Շրթունքներով աղօթում էին, իսկ օրտով միանգամայն հեռու մնում Աստուծուց։ Խստութեամբ պահում էին պասերը, մարմինը զրկում կերակուրներից, իսկ իրանց խորհուրդներն ու գործերը չար էին և անմաքուր։ Հագնում էին լայն հանդերձներ, իսկ նրանց տակ թաքնուած հոգին նեղ էր և չար, ընդունակ չէին դնով վա-

ճառուելու։ Երուսաղէմի տաճարը զարդարում էին մարմարիոնով, ոսկով, թանկագին քարերով, իսկ իրենց հոգու տաճարը աւազակաց այր, օձերի բուն դարձնում։ Արտաքուստ երևում էին բարեպաշտ, Աստուծոյ ժողովուրդ համարում իրենց. բայց չէին կատարում Նորա կամքը. ճշմարիտ Աստուծոյ անունը հեթանոսների առաջ չէին փառաւորում, Աստուծոյ արդարութեան համար քաղցածներին հոգևոր կերակուր չէին մատակարարում։ Հրէից ժողովուրդը անպտուղ թզենի էր։ Արտաքուստ տերևները փարթամ կերպով զարդարում էին ծառը, իսկ ճիւղերի վերայ մի հատիկ պտուղ անգամ չկար։ Իւր վերջին օրերը Յիսուս անց է կացնում հրէաների մէջ, վերջին անգամ նրանց խօսում է և վերջին դասն է տալիս թզենու օրինակով. «Տես, ժողովուրդ Աստուծոյ, ասում է Փրկիչը հրէաներին, քո վիճակը նման է անպտուղ թզենուն։ Ի՞նչպիսի սիրով անկեց քեզ Աստուած, ի՞նչպէս ես քեզ առատ ջուր տուի յաւիտենական կեանքի աղբիւրից. ի՞նչպիսի սիրով ջերմացրի

քեզ։ Տէր Աստուծուն քո պտուղը, ցոյց տուր մարդկանց թէ ինչպէս պէտք է լինի մարդկային կեանքը, աշխարհի առաջ երևան հանիր քո հոգու գեղեցկութիւնը։ Չեմ տալիս, պտուղ չունիս. թող, ուրեմն, այսուհետև պտուղ չբաղուի քեզնից յաւիտեան։ Խուլին՝ խօսքը, կոյրին՝ լոյսը ինչ կանէ։ «Առէք անպիտան ծառայից նորա քանքարը և տուէք տասը քանքար ունեցողին. որովհետև ունեցողին կը տրուի և կաւելացնուի, իսկ չունեցողից ունեցածն ևս կը խլուի» (Մատթ. Իե, 28—29)։

Այժմ, ընթերցող, հրէաներից դառնանք դէպի մեզ. միմիայն նրանց համար չէ այդ օրինակը. դուցէ մենք ևս անպտուղ թզենի ենք։ Ղուկասի աւետարանում ասած է, թէ մի անգամ Յիսուսի մօտ եկան ոմանք և պատմեցին այն Գալիլեացիների մասին, որոնց արիւնը Պիղատոսը խառնեց նրանց զոհերի հետ։ Յիսուս դորան պատասխանեց. «Կարծում էք թէ այն Գալիլիացիք, որ այդպէս տուժեցին, աւելի մեղաւոր էին քան միւսները։ Ո՛չ, ասում եմ ձեզ, այլ եթէ

չապաշխարէք, ամենքդ նոյնպէս կը կորչէք։ Կամ թէ կարծում էք, որ այն տասնութ հոգին, որոնց վերայ ընկաւ Սելոամի աշտարակը և սպանեց նրանց, աւելի մեղաւոր էին քան Երուսաղէմում բնակուած միւս մարդիկը։ Ո՛չ, ասում եմ ձեզ, այլ եթէ չապաշխարէք, ամենքդ նոյնպէս կը կորչէք»։ (Ղուկ. ԺԳ. 1—5)։

Չկարծենք թէ այդ մեզ չի վերաբերում. եթէ չապաշխարենք, բարի պտուղներ չբերենք, ամենքս էլ նոյնպէս կը կորչենք։

Յիսուս Քրիստոս երկրի վերայ Աստուծոյ արքայութեան սկիզբը դրեց, հիմնեց այն աշտարակը, որը մարդկանց դէպի երկինք պիտի բարձրացնէ։ Ինքն եղաւ շինութեան գլխաւոր անկիւնաքարը, տուեց մարդկանց ճշմարիտ կեանքի ուսումը և իւր օրինակով ցոյց տուեց թէ ինչպէս պէտք է ընթանալ այդ ուսման համեմատ։ Մարդիկ պէտք է հեռացնեն այդ աշտարակը բարձրացնեն դէպի աստուածային վեհութիւնը։ Որքան աւելանայ մարդկանց մէջ Աստուծոյ արդարութիւնը, որքան աւելի և աւելի

մաքրուի մարդու սիրտը, որչափ աւելի զօրեղ, իշխող կերպով հնչուի եղբայրական սիրոյ ձայնը երկրի վերայ, այնքան աւելի շուտ կիրագործուի Աստուծոյ արքայութիւնը մեր մէջ։ Ամեն մէկիս պարտականութիւնն է աշխարհի վերայ սիրոյ ջերմութիւնը աւելացնել, որչափ կարելի է շատ բարիք գործել, մարդկանց առաջ խօսքով և գործով ճշմարտութիւնը քարոզել։

Կեանքի մէջ, որպէս համաշխարհային մեծ շինութեան վերայ, աշխատանքը շարունակւում է անդադար, անընդհատ, գիշեր և ցերեկ, տարէցտարի, դարէ դար։ Մարդկանց խմբերը հերթով փոխարինում են իրար. ոմանք լրացնում են իրենց ժամանակը, հանդիստանալու են գնում, միւսները բռնում են նրանց տեղը։ Դրանք մարդկանց սերունդներն են. ոմանք ապրում, ծերանում և մեռնում են. ուրիշները ծնւում, մեծանում, նրանց տեղն են բռնում։

Շատ դործ է կատարուած թէ քիչ, կամ ինչ կելնի յետոյ, այդ չէ գլխաւոր խնդիրը։ Մեր խնդիրը, մեր բաժին աշխա-

տանքը կատարելն է։ Շինութիւնը հասել է մի որոշ բարձրութեան, կատարիր քո գործը. որչափ ներում են ուժերդ ու կարողութիւնդ բարձրացրու Քրիստոսի աշտարակի պատերը դէպի վեր, հաստատիր Աստուծոյ արքայութիւնը երկրի վերայ։ Իսկական օրմնադիրը նա չէ, ով կապել է գոգնոցն և կանգնել կրի տաշտի առաջ. ճշմարիտ բանուորը նա չէ, ով հաւաքել է իւր շուրջը աղիւս ու կիր։ Իսկական բանուորը նա է, ով առանց ձեռքերը ծալելու, շար շարի յետևից դնելով բարձնացնում է պատը, աշխատում է անընդհատ, մինչև որ հասնում է փոխուելու հերթը և նորան մի ուրիշն է փոխարինում։ Այժմ հարցնենք ինքներս մեզ. ինչ ենք արել երկրի վերայ Աստուծոյ արքայութեան համար։ Բարձրացրել ենք արդեօք մի նոր յարկ կամ գէթ մի քանի շարք աղիւս Քրիստոսի հիմնած աշտարակի վերայ։ Զէ որ տրուած է յատակագիծն ու ծրագիրը իւր կատարեալ ամբողջութեամբ։ Աւետարանը պարզ և մանրամասն կերպով ցոյց է տալիս թէ ինչպէս պէտք է ապրել, հրն է այն ճա-

նապարհը, որ տանում է դէպի յաւիտենական կեանք։ Տրուած է նաև ամենալաւ նիւթը. նայեցէք մարդու բանականութեանը։ Ինչեր չի անում մարդ իւր բանականութեան շնորհիւ, ինչպիսի հսկայական մեքենաներ, գործիքներ և դիւրացուցիչ յարմարութիւններ է ստեղծում մարդու միտքը։ Խնդիրը այն է միայն, թէ ինչ բանի վերայ է գործ դնում մարդ իւր բանականութիւնը։ Մէկը գործ է դնում իւր մտքի ամբողջ ուժը, որպէս զի, որչափ հնարաւոր է, աւելի բարձր կացութեան մէջ դնի հաղարաւոր թշուառների կեանքը, պատսպարէ որբերին, կերակրէ քաղցածներին, իսկ մի ուրիշը գիշեր ցերեկ գլուխ է կոտրում, որպէս զի, որչափ կարելի է, աւելի շատ թշուառութիւն սփռի իւր շուրջը։ Երկուսի համար էլ նիւթը նոյնն է՝ բանականութիւնը, սակայն միանգամայն տարբեր կողմեր ուղղուած։ Իսկ մարդու սիրտը. ինչպիսի՜ մեծ զօրութիւն է տալիս նա, երբ մարդ ամբողջ սրտով նուիրուում է մի բանի։ Խնդիրը այն է միայն թէ մարդ սրտով ինչ բանի է ձգտում, իւր ուժը ո՞ր

կողմն է ուղղում։ Բանականութիւն և սիրտ՝ Աստուծոյ շնորհած տուրքերն են մարդուն, թանգագինները՝ որ Աստուծոյ արքայութեան շինութիւնը երկրի վերայ կառուցանելու համար։ Ի՞նչ բանի վերայ ենք ծախսում մենք այդ նիւթերը և ինչ կերպով գործադրում։ Ինչ ենք արել մինչև այժմ Աստուծոյ գործի համար։

Երբ վառարանը լաւ տաքացած է, նա ամեն կողմ ջերմութիւն է տարածում և ամեն մի մօտեցողի անխտիր տաքացնում։ Երբ լապտերի մէջ շատ իւղ է ածած և պատրույկը կարգի բերած, նա ամբողջ դիշերը վառւում է և լոյս տալիս խաւարում։ Սրբու

։ Ենք արդեօք մեր շուրջը քրիստոնէական սիրոյ ջերմութիւն. լուսաւորում ենք արդեօք աստուածային ճշմարտութեան լուսով շրջապատող թանձր խաւարը։ Քրիստոնէական հաւատի զօրութիւնը խօսքի մէջ չէ, այլ այդ հաւատի համեմատ վարած կեանքի մէջ։ Հաւատի մասին խօսքերը՝ ծառի տերևներն են, իսկ մեր գործերը, զգացումները, մեր սրտի շարժումները՝ ծառի պտուղ-

ներն են։ Արդ, մեր թղթերն՝ մեր կեանքը ինչով է ծածկուած. միմիայն տերևներով, թէ տերևների տակ կան և պտուղներ։

ԱՑԴՈՒ ՁԱՐ ՄՇԱԿՆԵՐԸ

«Մի տանուտէր մարդ այգի տնկեց, ցանկով պատեց, հնձան փորեց նրա մէջ, աշտարակ շինեց և յանձնելով մշակներին, գնաց օտար աշխարհ։ Երբ պտղի ժամանակը մօտեցաւ, ուղարկեց իւր ծառաներին մշակների մօտ այգու արդիւնքը ստանալու։ Մշակները բռնելով նորա ծառաներին՝ մէկին տանջեցին, միւսին սպանեցին, երրորդին քարկոծեցին։ Կրկին ուղարկեց նա ուրիշ ծառաներ, առաջուանից թուով աւելի, նրանց էլ նոյնպէս արին։ Յետոյ ուղարկեց նրանց մօտ իւր որդուն, ասելով. դուցէ որդուցս ամաչեն։ Իսկ մշակները երբ տեսան որդուն, ասացին միմեանց. սա է ժառանգը, եկէք սպանենք սորան և տիրենք ժառանգութեանը։ Եւ բռնելով նրան՝ այգուց դուրս տարան և սպանեցին։

Արդ, երբ որ գայ այգու տէրը, ինչ կանի այդ մշակներին։ Ձարերին չարով կը կորցնէ, իսկ այգին կը յանձնէ ուրիշ մշակների, որոնք իւր ժամանակին կը տան նրան պտուղը»։ (Մատթ. ԻԱ., 33—41)։

Այս առակով Յիսուս պատկերացնում է հրէաների առաջ նրանց ամբողջ անցեալը և ապագան։ Որչափ խնամք էր վայելել հրէից ժողովուրդը Աստուծուց։ Ինչպէս արծիւը տանում է թևերի վերայ իւր ձագերին, այնպէս էլ Աստուած անցեկացնում հրէաներին կարմիր ծովից, ազատում նրանց ստրկութիւնից և բարեբեր Քանանը ժառանգութիւն տալիս նրանց։ Մովսէսի և միւս մարգարէների միջոցով յայտնում է նրանց իւր կամքը. տալիս է կեանքի ճշմարիտ օրէնքներ. նրանց իւր սիրելի ժողովուրդ դարձնում. յանձնում է նրան իւր ամենալաւ այգին և սպասում է, որ նոքա մշակեն ու այգու Տիրոջը ցանկալի պտուղներ մատուցանեն. որ նոքա իրենց կեանքը Աստուծոյ օրէնքների համեմատ կազմակերպեն, երկրի վերայ սէրը բազմացնեն, մի խօսքով օրինակ

հանդիսական ուրիշ աղդերի համար և իրենց սրբութեամբ Տիրոջ սուրբ անունը փառաւորեն։

Սակայն հրէաները վարւում են չար մշակների պէս. չեն ուզում ճանաչել իրենց Տիրոջը։ Աստուած նրանց նշաններ է ցոյց տալիս, մարգարէներ ուղարկում նրանց մօտ. նշաններին չեն ուզում հաւատալ, մարգարէներին ծաղրի են մատնում, քարկոծ անում։ Այն ժամանակ երկնաւոր Հայրը ուղարկում է իւր Որդուն։ Փրկիչը արտակարգ բարեսիրութեան գործեր է կատարում. մարդկանց նկատմամբ ամենամեծ սէրն է ցոյց տալիս, բաց է անում նրանց առաջ երկնային իմաստութեան դանձերը, ունկնդիրներին ճշմարիտ և բանական կեանքի ճանապարհներն է ուսուցանում, իսկ հրէաները Նորան նախատական մահուան են դատապարտում. խաչում են, որպէս չարագործի, աւազակների հետ։ Ուստի և խլում է չար մշակներից իրենց յանձնուած այգին. կատաւում է նրանց վրայ Փրկչի խօսքը. «Ահա ձեր տունը աւերակ կը թողնուի ձեզ համար.

բայց ասում եմ ձեզ, թէ այսուհետև այլևս ինձ չեք տեսնիլ, մինչև կասէք. օրհնեալ է Տիրոջ անունով եկողը» (Մատթ. ԻԱ., 36)։

Այս է վերև բերած առակի միտքը մարգարէներին չլսող և Փրկչին չընդունող հրէաների նկատմամբ. սակայն աւետարանի խօսքը ժամանակաւոր և տեղական նշանակութիւն չունի միայն, նա վերաբերում է ամեն ժամանակի, ամեն աղգերի։ Յիսուս Քրիստոս իւր խօսքի նկատմամբ ասում է ամենքին. «Ով որ ծարաւ է, թող գայ ինձ մօտ և խմի» (Յով. Է., 37)։ Ուստի և մենք նոյնպէս կարող ենք և պէտք է դաս առնենք այստեղից։ Մեզ նոյնպէս Տէրը տուել է իւր լաւագոյն այգին, մեզ մշակ է կարգել և սպասում է մեր աշխատանքի պտուղներին Աստուծոյ գործի համար։ Աւետարանը ուսուցանում է մեզ Աստուծոյ արդարութեան յաւիտենական ճշմարտութիւնը և ցոյց է տալիս մեզ Աստուծոյ արքայութիւնը իրագործելու բոլոր միջոցները։ Պէտք էր սպասել, որ Տիրոջ այգին ծաղկի, Աստուծոյ գործը երկրի վերայ աճի, աւետարանական

արդարութիւնը բաղմանայ մարդկանց մէջ, քրիստոնէական սէրը մեր ամէն մի քայլափոխում մեզ առաջնորդողը լինի։ Սակայն իրականութեան մէջ ըստ մեծի մասին այդպէս չէ, կեանքը չի տալիս ցանկալի բարի պտուղները. կեանքի ամբողջ ընթացքը ցոյց է տալիս, որ մենք ևս այժմ չար մշակներ ենք։ Տեսէք թէ դէպի ո՞ւր են ուղղուած մեր բոլոր ուժերը, մեր միտքը, դիտութիւնը, աշխատանքն ու հոգսերը։ Ամենից առաջ և ամենից աւելի ինչ ենք փնտռում մենք. Աստուծոյ ա՛ջքայութիւնն ու նրա արդարութիւնը, թէ՞ աշխարհի հաճոյքն ու նրա վայելքները։—Մեր շուրջը չէ՞ որ հաղարաւոր եղբայրներ ունենք, որոնք խաւարի մէջ են նստած, չէ՞ որ նրանք էլ մարդիկ են, Աստուծոյ որդիք, Տիրոջ արտ. այդ արտը սպասում է քրիստոնէական սիրոյ և ճշմարտութեան սերմերի ցանելուն։ Ի՞նչպէս նա փարթամ կերպով կը կանաչէր, ինչպիսի առատ հունձ կը տար, եթէ որ մենք մշակէինք նրան, մեր խաւար եղբայրների սրտերը կակղեցնէինք Աստուծոյ արդարութեան ձգտելու

հրաւէրով, աւետարանական խօսքի սերմերը ցանելով նրանց մէջ։ Ի՞նչու այդ չի կատարւում, կամ եթէ կատարւում է շատ անչնչան կերպով։ Ի՞նչից է առաջանում այդ։—Անցել է արդէն 1900 տարի այն օրուանից, երբ բացարձակ ճշմարտութեան լոյսը ծագեց երկրի վերայ, բայց դեռ հեթանոսները աւելի են քան քրիստոնեաները, նոյնիսկ քրիստոնեայ անունը կրող ժողովուրդների մէջ անուանական քրիստոնեաները աւելի շատ են, քան իսկական, ճշմարիտ քրիստոնեաները։ Այդ նրանից է, որ մենք այդու չար մշակներ ենք։ Աստուածային արդարութեան, Քրիստոսի սիրոյ լոյսը մեր կեանքի մէջ այնպէս չի լուսաւորում, որ ամենքը տեսնեն մեր բարի գործերը և փառաւորեն մեր Հօրը, որ երկնքումն է։ Միմեանց դէմ ունեցած ատելութիւնը, նենգութիւնը, խորամանկութիւնն ու խարդախութիւնը մեր մէջ աւելի պակաս չէ քան որ և է հեթանոսի մէջ։ Դիտեցէք վաճառականութիւնը, ինչի վրայ է հիմնուած նա։ Խարէութեան վրայ։ Վեր առէք մի ազգի ունեցած յարա-

բերութիւնները միւսի հետ, նոյն երկրում տարբեր դասակարգերի, զանազան դիրքի մարդկանց յարաբերութիւնները միմեանց հետ. ինչով են առաջնորդւում նոքա բոլորը։ Իրենից աւելի թոյլին իրեն հպատակեցնելու, իւր օգտին աշխատեցնելու, ուրիշի հաշուով ապրելու ցանկութեամբ։ Մեր կեանքի մէջ երևում է, որ գիտենք և յիշում ենք Փրկչի խօսքերը. «Ձեզնից մեծը թող ամենքի ծառան լինի»։ «Ձեր մէջ թող այնպէս չլինի. այլ ձեզնից ով ուզում է առաջինը լինել. թող ամենքի սպասաւորը լինի»։ (Մատթ. Ի, 26—27). Ոչ։ Մեր քրիստոնէութիւնը արտաքին է։ Մենք մոռացել ենք, թէ ո՞վ ենք եւ ինչի համար ենք ապրում, աչքից թողել ենք Տիրոջ արտը և այնտեղ փուշ ու տատասկ է բուսել։ Մենք այդու չար մշակներն ենք, չենք տալիս այդու տիրոջը՝ Աստուծուն հարկաւոր պտուղները։ Մարդկանց սերունդները ծովի ալիքների նման յաջորդում են իրար, իսկ կեանքը, իւր էութեամբ, մնում է նոյնը. ծնւում են նոր մարդիկ, առաջանում են նոր սովորու-

թիւններ, շինւում են նոր քաղաքներ, սակայն չարիքը, անարդարութիւնը, բռնութիւնը նրանց մէջ մնում է նոյնը, որպէս հնումն, անփոփոխ։ Մարդիկ հետախուզում, ուսումնասիրում են հեռաւոր երկրները, ճանապարհներ են բաց անում ամայի անապատներ և մութ անտառների միջով, իսկ իրենք իրենց, իրանց սիրտը, հոգու խաւարն ու ամայութիւնը չեն ուզում ճանաչել, Աստուծոյ արդարութեան ճանապարհները չեն հասկանում և չեն ուզում փնտռել։ Երկրի վերայ մարդիկ շատանում են, մեծանում է նրանց հարստութիւնը, ծաղկում են գիտութիւնները, շարունակ նորանոր գիւտեր են լինում, միմիայն Աստուծոյ արդարութիւնն է, որ երկրի վերայ միւսներին հաւասար չի աճում, աւետարանական սէրն է, որ չի շատանում մարդկանց մէջ, երևան չեն գալիս նոր, անձնուրաց, Քրիստոսի հոգին իրենց մէջ կրող ու աւետարանող առաքեալներ։ Մեծ է աշխարհը, զարմանալի գեղեցիկ, անթիւ են նրա մէջ մարդկանց համար եղած բարիքներն և ուրախութիւնները, բայց և

այնպէս մարդկանց կեանքը ծանր և տխուր է։ Մեզ տրուած է հրաշալի, հաղուագիւտ այդի, ամեն ինչ յարմարեցրած է լաւ մշակութեան համար, ցոյց է տրուած աշխատանքի ամենակատարեալ ձևերն ու միջոցները, սակայն հարկաւոր պտուղներն ու արդիւնքը չկայ։ Դորա պատճառը մեր մէջ պէտք է որոնել, մենք այդու չար մշակներ ենք։

ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ

Յիսուս դուրս գալով տաճարից, իւր աշակերտների հետ դիտում էր, թէ ինչպէս ժողովուրդն իւր տուրքն էր ձգում գանձանակի մէջ։ Հարուստներն առատութեամբ ոսկի ու արծաթ էին ձգում գանձանակի մէջ։ Մօտեցաւ նաև մի աղքատ այրի կին և ձգեց նրա մէջ երկու լումայ, որ շատ չնչին արժէք ունի։ Սակայն Յիսուս ոչ միայն նկատեց այրի կնոջ տուրքը, այլ նաև այդ աւելի բարձր գնահատեց հարուստների ընծայաբերութիւնից։ Աշակերտների ուշադրութիւնը աղքատ կնոջ վրայ դարձնելով, Յիսուս ասաց նրանց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այդ աղքատ այրին ամենքից աւելի ձգեց։ Նրանք բոլորն էլ իրենց ունեցածի աւելորդից տուին. իսկ սա իւր չքաւորութիւնից ձգեց այն ամենը, ինչ որ ունէր» (Ղուկ. ԻԱ, 3—4)։

Ներկայ ժամանակում, երբ մեր մէջ ամէն ինչ չափւում է դրամով երբ մարդու ոյժը գնահատւում է նրա բռունցքի զօրութեամբ, վերև բերած Աւետարանի պատմութիւնը այրի կնոջ լումայի մասին մեծ կարևորութիւն ունի։ Ինչպէս որ հիւանդ մարդու լեղուն ու քիմքը ծածկւում է թանձր շերտով և նա չի կարողանում որոշել կերակրի համը, չի զանազանում աղին ու դառը, թթուն ու քաղցրը, այնպէս և մենք ամենքս հիւանդ ենք հոգով. մեր խիղճը պատած է չարի ու նենգութեան թանձր շերտով և մենք սրտով չենք զգում բարու ու չարի մէջ եղած տարբերութիւնը, չենք կարողանում յաճախ տարբերել, որն է Աստուծոյ կամքը և որը մարդկային մոլորութիւնը։ Մենք չարունակ կարծում ենք, որ Աստուծոյ գործը երկրի վրայ իրականացնելու համար պահանջւում են մեր սովորական միջոցները. մեծ գումար, զօրեղ իշխանութիւն, ընդարձակ գիտութիւն։ Մենք մոռանում ենք, որ Ինքը Քրիստոս՝ Նրան չհաւատացող հրեաների աչքում, Նազարեթցի մի հասարակ

հիւանի որդի էր, որ Նա իւր վարդապետութեան ընթացքում, ինչպէս Ինքն է ասում, գլուխ դնելու մի տեղ չունէր. որ Նա, վերջապէս, նոյն իսկ մի երկդրամեան չունէր իւր մօտ, երբ տաճարի համար տուրք հաւաքողները Նրանից պահանջում էին այդ։ Բայց սակայն, չնայելով այդ բոլորին, Յիսուս հաստատեց Աստուծոյ արքայութիւնը երկրի վրայ, որ քանի գնում, աւելի աճում և զօրանում է։ Նորա օրինակն ու այրի կնոջ լումայի գովասանքի խօսքերը համոզիչ կերպով ասում են մեզ, որ Աստուծոյ գործի համար ամենից առաջ կարևոր չէ այն, թէ մարդ որչափ գիտութիւն ու խելք ունի, որքան իշխանութիւն՝ իւր ձեռքին և ինչքան փող՝ գրպանում, այլ այն, թէ որքան սէր ունի իւր սրտում դէպի Աստուծոյ արդարութիւնը, որչափ հոգով նուիրուած է Քրիստոսին։ Մաքենագէտները հպարտանում են նրանով, որ միջոցներ են գտել տեղից տեղ փոխադրելու ահագին մեծութեամբ տներ։ Իսկ նա, ով հաստատուն հաւատ ունենայ դէպի Քրիստոսի

խօսքը, հաւատայ, որ մարդիկ կեանք ունին միմիայն Աստուծոյ արդարութեան խօսքով, որ մեր կեանքը դեղեցիկ է միմիայն Քրիստոսի սիրով, լեռներ շարժել կարող է։

Անարդարութեան ու չարիքի լեռներեն բարձրացրել մարդիկ իրենց շուրջը, և այդ լեռները չեն կարող կանգնել այն մարդու առաջ, որ լցուած է սիրով դէպի մարդիկ և դէպի Աստուծոյ արդարութիւնը երկրի վրայ։ Երբ մարդու սրտում հաստատուած է Քրիստոսի արդարութիւնը և հոգու մէջ խօսում է Աստուծոյ ձայնը, այն ժամանակ նրա շրթունքներն առանց նախապատրաստութեան այնպիսի խօսքեր կարտասանեն, որի առաջ կը լռեն նոյն իսկ ամենապերճախօս իմաստունները։

Աստուծոյ գործի շինութեան համար փոքն առաւել ևս վերջին տեղն է բռնում. Աստուծոյ արքայութեան աճումը մարդոց մէջ կախուած է ոչ թէ նրա համար ծախսած գրամի քանակութիւնից, այլ այդ գործի մէջ ցոյց տուած սիրոյ ուժից։ Աւետարանի

պատմութիւնը հինգ հազար մարդու հինգ նկանակով և երկու ձկնով կերակրելու մասին առանձնապէս ուսանելի է այս նկատմամբ։ Ամբոխին ամբոխը լսում էր Յիսուսին ամբողջ օրը։ Արևը մայր մտնելու վրայ էր։ Այն ժամանակ Յիսուսի աշակերտները մօտեցան Նորան և ասացին. «Այս տեղն անապատ է, դեռ օր կայ, արձակիր ժողովրդին, որ գնան շրջակայ գիւղերն ու աւաններն և իրենց համար ուտելու բան գնեն, որովհետև այստեղ ուտելու ոչինչ չունին»։ Յիսուս մարմնական կերակուրի համար չկամեցաւ ընդհատել հոգևոր սնունդի մատակարարումը և ասաց աշակերտներին. «Դուք տուէք դրանց ուտելու բան». Աշակերտները զարմացան, թէ ինչպէս իրանք կարող էին կերակրել հազարաւոր մարդկանց, երբ իրանց մօտ միմիայն հինգ փոքր հաց և երկու ձուկ կար։ «Դրանց կշտացնելու համար երկու հարիւր դահեկանի հաց հարկաւոր կը լինի», ասացին աշակերտները (Մարկ. Զ. 37)։ Յիսուս հրամայեց աշակերտներին, որ ժողովրդին խումբ խումբ նստեցնեն դալար խոտի

վրայ, վերցրեց հայն ու ձուկը, նայեց դէպի երկինք, օրհնեց, մանրեց և տուաւ աշակերտներին, որ բաժանեն ժողովրդին։ Կերան ամենքը և կշտացան։ Այդպէս է և միշտ Աստուծոյ բարի գործի մէջ։ Մօտենալով նրան, հոգ տար՝ ոչ թէ որչափ կարելի է գրամի պաշար շատ հաւաքելու, այլ գործի մէջ ուրքան կարելի է աւելի հոգի ու սիրտ դնելու համար։ Կրկնում եմ, Աստուծոյ գործը չինւում է ոչ թէ գրամով, այլ բարի սրտով, սիրող հոգով. նա պահանջում է մարդուց ամենից առաջ ոչ թէ փող, այլ հէնց իրան՝ մարդուն, նրա հոգին, սիրտը։ Մեծ քաղաքներում կան հաղարաւոր դանագան տեսակ բարեգործական ընկերութիւններ մեծամեծ դրամագլուխներով, սակայն նկուղների աղքատութիւնը դրանով չի նուազում երբէք, թշուառ եղբայրների կշտացած սրտերը չեն կակղում նոյն իսկ մի փոքր չափով։ Ի՞նչ է պատճառը։ Այն, որ ունևորները փող են տալիս, իսկ իրա՞նք մի կողմ քաշւում։ Նրանք բարիք են գործում վարձկան մարդկանց ձեռքով. սիրտը փո-

խարինել են գրպանով. սիրոյ փոխարէն փոխարէն քանց փոքր եղբօրը քսակն են առաջարկում։ Նրանք իսկ և իսկ, ըստ Աւետարանի խօսքի, հացի փոխարէն քար են տալիս, և ձկան փոխարէն՝ օձ։ Թշուառ աղքատին, անտուն անդամալոյծին, հիւանդ հարբեցողին դեռ բաւական չէ հագցնել, կերակրել, բժշկել, նրան աւելի կարևոր է ջերմացնել սիրով, մօտենալ նրան եղբայրական կարեկցութեամբ։ Զէ՞ որ նա հոգով աւելի է տանջուած, քան մարմնով և զայրացած մարդկանց դէմ։ Փողով նրան չի կարելի կրկին դէպի մարդիկ դարձնել։ Աշխատեցէք, որ նա նորից ղգայ սիրոյ ոյժն ու զօրութիւնը, տուէք նրան ձեր սիրտը, հոգով մօտեցէք նրան։ Մարդիկ ամենից աւելի կարիք ունին սիրոյ. աշխարհը ոչ մի բանի այնքան կարիք չունի, որքան սիրոյ։ Ցոյց տուէք այդ սէրը, որքան և որտեղ կարող էք, բոլոր մարդոց անխտիր։ Մարդկանց մէջ Աստուծոյ արքայութիւնը կառուցւում է սիրոյ վրայ. մարդու սիրտն է այն դանձարանը, որտեղ հաւաքւում են այդ թագաւորութեան հաս-

տատուԹեան ու բարեղարդուԹեան համար բոլոր հարկաւոր միջոցները։ Զգեցէք այդտեղ ձեր տուրքը։ Թող նա չնչին լինի, բայց միայն ԹԷ ջերմ սրտից և մաքուր հոգուց բղխած։ Ճշմարիտ սիրոյ ոյժը չափով չի չափւում, կշռով չի կշռւում, այլ գնահատւում է Աստուծոյ գործին նուիրման աստիճանով։ Իւրաքանչիւր ոք առանձին Աստուծոյ գործի համար գուցէ և շատ քիչ բան կարողանայ անել. բայց չէ որ մենք Թուով շատ ենք։ Մի հին պատմուԹիւն կայ, ԹԷ ինչպէս մի Թագաւոր իւր անհամար զօրքով անապատի միջից անցնելիս բանակ դրեց այդտեղ հանգստանալու համար և ցանկանալով մի յիշատակ Թողնել իւր իջևանած տեղում, հրամայեց իւր զօրքերից իւրաքանչիւրին մի մի գլխարկ հող բերել և մի տեղ լցնել։ Ի՞նչ բան է մի գլխարկ հողը։ Բայց և այնպէս այդ գլխարկներով բերած հողերից մի ահագին բլուր կազմուեցաւ։ Այդպէս է ահա և կեանքի մէջ։ ԵԹԷ մենք յանուն բարի գործի հաւաքուինք միասին, բաժին հանենք Աստուծոյ գործի համար, որպէս այրի կինը

Աստուծոյ գանձանակի համար, գէԹ մեր եռանդի մի կաթիլը, այն ժամանակ ամենուրեք՝ քաղաքներում ԹԷ գիւղերում, եռասիրուԹեան հարԹուԹեան վրայ բարուոյ բլուրներ ու լեռներ կը բարձրանան։ Ի վաղուց հետէ կառուցւում է Աստուծոյ արքայուԹիւնը երկրի վրայ։ Ինքը Յիսուս դրեց այդ ԹագաւորուԹեան սկիզբը։ Առաքեալներն ու Քրիստոսի միւս սպասաւորները, բարւոյ մեծ հերոսները՝ նուիրեցին իրենց բոլոր ուժերն այդ գործին՝ Աստուծոյ ճշմարտուԹեան տաճարը երկրի վրայ կառուցանելու համար։ Ո՛վ ընԹերցող, դու ևս ձգիր քո լուման Աստուծոյ գործի համար։

ՀԱՅԿ. ԳՐՔ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿ. ԳՐՔ. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0157429

2007